ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողի քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործընթացում
Առարկան՝ Բնագիտություն
Հետազոտող ուսուցիչ՝ Նասխուլյան Սվետլանա
Ուսումնական հաստատություն՝ Անտոն Չեխովի անվ հ.55 դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

1. ***Քննադատական մտածողություն եզրույթն ու սահմանումները----------4***
2. ***Դասապրոցեսի ընթացքում քննադատական մտածողության զարգացման առանձնահատկությունները----------6***
3. ***Քննադատական մտածողության զարգացմանն ուղղված մեթոդներ----------10***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Արդի աշխարհում՝ տեխնոլոգիական առաջընթացի 21-րդ դարի պայմաններում, երբ յուրաքանչյուր մարդ ու ամեն վայրկյան կարող է ստանալ իրեն հետաքրքիր ցանկացած ինֆորմացիա, երբ գիտելիքը դարձել է ամենուր հասանելի կրթության առջև ծառացել են նոր հիմնախնդիրներ: Այսօր առաջադեմ մարդկությունը գիտելիքի՝ զուտ ինֆորմացիայի տիրապետման խնդիր չունի: Ավելին, այսօր չափազանց շատ ու տարաբնույթ է ինֆորմացիան: Արդի հասարակության առաջնային ու կարևորագույն խնդիրը ինֆորմացիայի բեռի տակ չկքելն է, ստացած տեղեկատվությունն ու գիտելիքը ճիշտ ընկալելը, դրան գիտակցաբար մոտենալը, հարկ եղած դեպքում նաև ստեղծագործաբար փոփոխելը այն է, ինչ՝ որպես հասարակության էակի, պահանջվում է ժամանակակից մարդ անհատից:

Բացի այդ ժամանակակից դպրոցն ու ուսուցիչը դադարել են լինել զուտ ինֆորմացիայի ու գիտելիքի աղբյուր: Այսօրվա աշակերտն ունի իրեն հետաքրքրող ամեն ինչ ձեռքի տակ ու դասապրոցեսը՝ որպես նոր տեղեկատվության աղբյուր վաղուց իր տեղը զիջել է տեղեկատվական տեխնոլոգիաներին: Ուստի ուսուցչի խնդիրն է դասը դարձնել ոչ թե գիտելիք մատուցող օղակ, այլ գիտելիքի ձևավավորումն ու խթանումն ուղղորդող անձ: Բացի այդ այժմ կարևորվում է ոչ թէ ինֆորմացիայի տիրապետումը, այլ դրա ճիշտ գնահատումն ու ընտրությունը, վերլուծությունը: Հիշյալ հանգամանքներն, անկասկած վկայում են հետազոտական աշխատանքի արդիականության մասին:

Աշխատանքի նպատակն է .

- Ուսումնասիրել դպրոցականի մոտ քննադատական մտածողության զարգացման առանձնահատկությունների դասպրոցեսի ընթացքում:

Աշխատանքի խնդիրներն են.

- Ուսումնասիրել քննադատական մտածողության սահմանումները, եզրույթի ընկալումը մանկավարժական և հոգեբանական գրականության մեջ,
- Ներկայացնել դասապրոցեսի ընթացքում քննադատական մտածողության զարգացման առանձնահատկություններն ու հիմնական սկզբունքները,
- Ներկայացնել մեթոդական առանձնահատկությունները:

1. *Քննադատական մտածողություն եզրույթն ու սահմանումները*

Ժամանակակից կրթական տխնդիրներով զբաղվող գիտնականները հատուկ ուշադրություն են դարձնում քննադատական մտածողության զարգացման հարցին, այն զարգացնելու ուղիներ են փնտրում, առաջարկում են իրենց տեխնոլոգիաները և մեթոդները: Քննադատական մտածողությունը դիտարկվում է փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության և այլ գիտակարգերի կողմից: Մանկավարժության և հոգեբանության մեջ այս հարցով զբաղվում են Պ.Բլոնսկին, Վ.Բոլոտովը, Տ.Վորոպայը, Ա.Տյագլոն , Տ.Խաչումյանը և ուրիշներ:

Քննադատական մտածողության սահմանումները ևս մի քանի տասնյակի են հասնում: Լ.Տերլեցկայան կարծում է, որ քննադատական մտածողությունը այնպիսի մտածողություն է, որը բնութագրվում է.

- խորությամբ (իրերի էության մեջ ներթափանցելու ունակությամբ),
- հետևողականությամբ (դիտելու ունակություն, տրամաբանական կանոններ),
- անկախությամբ (հարց տալու, նոր մոտեցումներ գտնելու կարողություն դրանց պարզաբանմամբ),
- ճկունությամբ (խնդրի լուծման եղանակը փոխելու ունակություն),
- արագությամբ (արագ առաջադրանքը հաղթահարելու կարողություն)[1]:

Վ.Բոլոտովը քննադատական մտածողությունը համարում է տարբեր մոտեցումների պրագմատիկ դիտարկում՝ առողջ դատողություններ ընտրելու և իմաստալից որոշումներ կայացնելու համար[2]:

Տ.Խաչումյան քննադատական մտածողությունը դիտարկումը է որպես հոգեկանի առանձնահատուկ գործողությունների համալիր, որոնց բնորոշ հատկանիշներն են.

- վարկածի մշակման և վերլուծության վրա հիմնված ցանկացած խնդրի լուծման ճիշտ ճանապարհ ընտրելու ռազմավարության մշակում,
- տեղեկատվության հետ ռեֆլեքսիվ գործողությունների իրականացում (վերլուծական, ստուգման, վերահսկման, գնահատման),
- տարբեր կարծիքների և տեսակետների հավասարակշռված վերլուծություն,

[1] Терлецкая Л. Критическое мышление как средство развития умений учащихся анализировать и применять информацию // Материалы международной научно-практической конференции «Развитие навыков критического мышления», М.: МГИМО-Университет, 2015, с. 64.
[2] Болотов В. Критическое мышление – ключ к преобразованию российской школы / В. Болотов, Дж. Спиро // Директор школы. – 1995. № 1. – С.71.

- սեփական դիրքորոշման դրսևորում, ինչպես սեփական, այնպես էլ արտաքին գործունեության գործընթացի և արդյունքների օբյեկտիվ գնահատում [3]:

Վ.Տեպլովը խոսում է մտքի քննադատության մասին՝ որպես մարդու ճանաչողական գործունեության որոշակի որակ[4]: Մ.Կլարինը քննադատական մտածողության մասին խոսում է որպես ռացիոնալ, ռեֆլեկտիվ մտածողության, որն ուղղված է որոշելու, թե ինչին արժե հավատալ կամ ինչ գործողություններ իրականացնել[5]:

Քննադատական մտածողության վերաբերյալ իր տեսակետն ունի ամերիկացի հոգեբան, «Քննադատական մտածողության հոգեբանություն» ձեռնարկի հեղինակ Դ.Հալպերնը: Նա կարծում է, որ քննադատական մտածողությունը ճանաչողական տեխնիկայի կամ ռազմավարությունների օգտագործումն է, որոնք մեծացնում են ցանկալի վերջնական արդյունքի հասնելու հավանականությունը: Սա մտածողության այն տեսակն է, որն օգտագործվում է խնդիրներ լուծելիս, եզրակացություններ կազմելիս, հավանականական գնահատումներ կատարելիս և որոշումներ կայացնելիս: Քննադատական մտածողությունը կարելի է անվանել ուղղորդված մտածողություն, քանի որ այն նպատակ ունի ստանալ ցանկալի արդյունք: Այս առումով քննադատական մտածողությունը հակադրվում է կարծրատիպային, ավտոմատ մտածողությանը, այսինքն՝ ուղղված չէ կոնկրետ նպատակի հասնելուն: Քննադատական մտածողությունը ներառում է նաև ինքնին մտածողության գործընթացի գնահատում, այն պատճառաբանությունների որոնում, որը հանգեցրեց մեր որոշում կայացնելուն[6] :

Ամփոփելով քննադատական մտածողության էությունն ու բովանդակությունը հասկանալու տարբեր մոտեցումները՝ կարող ենք ասել, որ մանկավարժության մեջ քննադատական մտածողությունը դիտվում է որպես պարտադրված մտածողության հականիշ որպես ինքնուրույն, տրամաբանական, ստեղծագործ մտածողություն: Այս տեսակի մտածողության բնորոշ հատկանիշներն են անհատականությունն ու սոցիալականությունը: Ասել է, թե յուրաքանչյուր միտք փորձարկվում և արդարացվում է, երբ այն կիսվում է ուրիշների հետ: Այս մտածողությունը տալիս է որոշակի

[3] Хачумян Т. И. Понятие "критическое мышление" и его сущность в психолого-педагогической науке / Хачумян Т. И. // Теоретические вопросы культуры, образования и воспитания: сб. наук. пр. Вып. 24, часть 2. – Киев : Издательский центр КНЛУ, 2003, С. 174.
[4] Теплов Б. М. Избранные труды в 2-х т. / Б. М. Теплов. – Педагогика, 1985, Т. 2, С. 198.
[5] Кларин М.В., Инновационные модели обучения в зарубежных педагогических поисках / М. В. Кларин. – М. : Арена 1994, с. 124 .
[6] Халперн Д. Психология критического мышления / Халперн Д. – СПб : Питер, 2000, с.51.

հարցերում անձնական դիրքորոշումը ճանաչելու և պաշտպանելու ունակություն, նոր գաղափարներ գտնելու և քննադատաբար վերլուծելու կարողություն:

2. Դասապրոցեսի ընթացքում քննադատական մտածողության զարգացման առանձնահատկությունները

Սովորողների քննադատական մտածողությունը զարգացնելու համար ուսուցիչը պետք է իր աշխատանքում համատեղի

- ✓ հետազոտական,
- ✓ որոնողական և ստեղծագործական մեթոդներն ու տեխնիկան:

Անհրաժեշտ է ուսումնական գործընթացը կազմակերպել որպես խնդրահարույց հարցերի պատասխանների որոնում, քանի որ նման աշխատանքը միշտ օգնում է ակտիվացնել ուսանողների որոնողական գործունեությունը: Ուսումնառության հետաքրքրությունը ակտիվացնելու համար պետք է ընտրվեն այնպիսի թեմաներ, որոնք հետաքրքիր և մոտ են աշակերտներին և ունեն զարգացման ներքին մոտիվացիա և գիտակցում են ուսումնասիրվածի գործնական նշանակությունը:

Դասարանում և դասապրոցեսի ընթացքում քաննդատական մտածողության զարգացման կարևորագույն պայմանը բարենպաստ հոգեբանական մթնոլորտի առկայությունն է, որում աշակերտը չի վախենա փորձել, ստեղծագործել, կկարողանա զգալ իրեն թիմի անդամ ու ստանալ այդ թիմի աջակցությունը: Կարևոր է յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն տալ արտահայտելու իր կարծիքը, քանի որ վերջիններս կսկսեն աշխատել, եթե իմանան, որ իրենց կարծիքը գնահատվում և հարգվում է: Ուստի կրթական պրոցեսում պետք է օգտագործվեն առաջադրանքներ, որոնք նպաստում են աշակերտների ստեղծագործական կարողության զարգացմանը՝ դրանով իսկ ձևավորելով մարդկանց, ովքեր ի վիճակի են արտահայտել տարբեր գաղափարներ, ունեն ճկուն մտածողություն և կարող են խնդիրը դիտարկել տարբեր տեսանկյուններից:

Դասարանում քննադատական մտածողության զարգացմանը միտված առաջադրանքները պետք է հստակ պլանավորված լինեն անգամ հարցերի ձևակերպման տեսանկյունից: Վերջիններս պետք է աշակերտներին կողմնորոշեն մտորումների և վերլուծությունների: Սովորողների ևս մեջ ձևավորեն հարցեր տալու կարողություն, սովորեցնել ուսանողներին կազմել տարբեր տեսակի հարցեր՝ ապահովելով գիտելիքի և տեղեկատվության ձեռքբերում, որոշակի

եզրակացությունների հասնելու, դրանք գնահատելու կարողություն: Այս տեսանկյունից հույժ կարևոր խնդիր է հարցերի դասակարգումը՝ կապված գիտելիքի ձեռքբերման փուլից: Եթե ինֆորմացիայի ու գիտելիքի հավաքագրման փուլում ավելի շատ կիրառելի ու արդյունավետ են ինչ, որտեղ, երբ և նմանատիպ այլ հարցեր, ապա վերջինիս վերլուծության փուլում, երբ անհրաժեշտ է ձեռք բերված գիտելիքն անալիզի ենթարկել ավելի նպատակահարմար են դառնում, ինչու, ինչ պատճառով, ինչի հետևանքով և ինչպես հարցերը, որոնք ավելի բաց են ու խորհելուն են նպատակաուղղված, քան դոգմաների տիրապետմանը: Երեխան ինքը պիտի իմանա այս հարցերի կարևորությունը, դասակարգման սկզբունքը, որպեսզի կարողանա իրականացնել որևէ թեմայ հետազոտում:

Ուսումնական գործընթացում անհրաժեշտ է համատեղել ինչպես անհատական, խմբային և զույգային, այնպես էլ անհատական առաջադրանքները, որոնք յուրաքանչյուր երեխայի հնարավորություն են տալիս ավելի շատ ցուցադրել իրենց կարողությունները, իսկ խմբակային աշխատանքի ձևերը միավորում են խմբի բոլոր անդամների ջանքերը՝ հաջողության հասնելու համար: Խմբային աշխատանքների ժամանակ, երբ կա ընդհանուր նպատակ, աշակերտները սովորում են լսել իրենց ընկերներին՝ հասկանալով, որ արդյունքը կախված է յուրաքանչյուրի աշխատանքից:

Կան մի շարք մեթոդներ, որոնք նպաստում են քննադատական մտածողության զարգացմանը: Դասախոսության մեթոդը նպաստում է քննադատական մտածողության զարգացմանը միայն այն ժամանակ, երբ ուսուցիչն իր ուղերձում տրամաբանորեն և հետևողականորեն բացահայտում է որոշակի խնդիր, առաջարկում քննարկման ալգորիթմ, սովորեցնում է աշակերտներին աշխատել ուսումնական նյութի հետ: Սովորողների հետաքրքրությունը խթանելու համար ուսուցիչը պետք է ընտրի այն խնդիրները, որոնք արդիական են ու համապատասխանում են աշակերտի բնավորությանը, հետաքրքրություններին ու ընդունակություններին: Լավ մշակված հետաքրքրություն ներկայացնող դասախոսությունն արթնացնում է սովորողների հետազոտական հմտությունները, նյութը ինքնուրույն ընկալելու ցանկությունը: Այստեղ կարևոր և էական է ժամանակին կանգ առնելը ամենահետաքրքիր հատվածում բացթողումների գնալն ու երեխաներին ինքնակրթության մղելը:

Էվրիստիկական զրույցի մեթոդը ևս հետաքրքրական է քննադատական մտածողության զարգացման համար: Զրույցի ընթացքում տեղի է ունենում մտքերի ակտիվ փոխանակում, ուսանողները սովորում են պատասխանել տարբեր

մակարդակների տարբեր տեսակի հարցերի: Էվրիստիկական խոսակցության բարձր արդյունավետությունն ապահովվում է խնդրահարույց բնույթի հարցերով: Խնդիրային հարցերն են, որ խրախուսում են աշակերտների մտորելու, տրամաբանելու: Դրանց պատասխանը կարելի է գտնել միայն վերլուծական աշխատանքի հիման վրա: Այսինքն մեծ մասամբ սրանք հարցեր են, որ պատասխանում են ինչու և ինչպես հարցերին: Աշակերտները պետք է մանրամասն ուսումնասիրեն նոր նյութը՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով համեմատություններ և հակադրություններ: Սովորեն ընդհանրացնել, գրաֆիկորեն պատկերել փորձարարական հետազոտության, ստեղծագործական աշխատանքի արդյունքները:

Խնդրահարույց, հետազոտման ենթակա հարցերը պետք է կապված լինեն սովորողների արդեն ունեցած փորձի և այն իրավիճակների կանխատեսման հետ, որոնց նրանք հետագայում կհանդիպեն կյանքում: Խնդրահարույց հարցի վրա աշխատանքը կարող է կազմակերպվել որպես վարկածներ առաջ քաշելու և դրանք հետազոտությամբ ստուգելու գործընթաց: Սա կխթանի ուսանողների ճանաչողական գործունեությունը, քանի որ վարկածները հաստատելու կամ հերքելու համար ուսանողները պետք է աշխատեն տեղեկատվության հետ, առաջարկեն իրենց մտքերը:

Օրինակ՝ որպես նախնական վարկած կարելի է կիրառել հետևյալը.

Բնության ու կենսամիջավայրի մարդածին փոփոխությունների արդյունքում մարդն ինքը զրկվում է որոշ կենդանատեսակներից, որոնք նպաստում են մի շարք օգտակար բուսերի փոշոտմանն ու բազմացմանը: Արդյունքում մարդկությունը կանգնած է կենսական կարևորություն ունեցող մի շարք վայրի բուսատեսակներից:

Հաջորդիվ բացահայտման գործընթացը կարելի է սկսել հետևյալ հերթականությամբ.

- Ինչ, երբ, որտեղ,
- Ինչու, ինչպես,
- Ինչպես է փոխկապակցված ճանապարհի կամ գործարանի շինարարությունը միջատի անհետացման հետ…

Քննադատական մտածողության զարգացման համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել պրակտիկ մեթոդներին, դասերին կիրառել ինտերակտիվ մեթոդներ՝ աշակերտներին հնարավորություն տալով աշակերտներին իրարից սովորելու, քանի որ ինտերակտիվ ուսուցման ընթացքում աշակերտը սովորում է

սովորեցնելով, նա իրեն զգում է իրադարձությունների ակտիվ մասնակից և ինքնուրույն է կազմակերպում սեփական կրթությունն ու զարգացումը: Նման գործողությունները հնարավորություն են տալիս դպրոցականների մոտ զարգացնել ներդաշնակության և ինքնատիրապետման հմտությունները:

Ինտերակտիվ գործունեությունը պետք է օգտագործվի որոշակի խնդրահարույց իրավիճակներ լուծելու համար, աշխատանքը անհրաժեշտ է կազմակերպել որպես խնդրահարույց հարցերի պատասխանների որոնման ուղի, սովորողներին ուղղորդել երկխոսության, մշտական համագործակցության: Ինտերակտիվ գործունեության խթանումը յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն է տալիս իրեն փորձել որպես ուսուցիչ՝ առաջնորդ: Նրանք ոչ միայն պետք է հաջողությամբ ընտրեն նյութը, հետաքրքիր ներկայացնեն այն, այլև մտածեն ստուգման համար առաջադրանքների կամ հարցերի կազմման մասին: Միայն այս դեպքում յուրաքանչյուր աշակերտ կկարողանա հասկանալ՝ արդյոք իր աշխատանքն արդյունավետ է եղել:

Ինտերակտիվ կրթական մեթոդը ևս իրականացվում է որոշակի տեխնիկայի միջոցով և նախատեսում է տարբեր տեսակի աշխատանքներ:

- Ընթերցանություն - սովորողի սեփական, ինքնուրույն կարծիքի ձևավորման համար:

Աշխատելով տեքստի հետ՝ սովորողները ինքնուրույն լուծում են կրթական խնդիրներ, գտնում են անհրաժեշտ փաստերը, սովորում են կապեր հաստատել իրադարձությունների միջև, վերլուծել, հետազոտել, համեմատել, սինթեզել: Տեղեկատվության խորը վերլուծության և սինթեզի հիման վրա յուրաքանչյուր աշակերտ կարող է ձևավորել իր տեսակետը որոշակի հարցի վերաբերյալ: Որպեսզի տեսակետները դառնան համոզմունք, դրանք պետք է փորձարկվեն, քննարկվեն:

- Երկխոսությունը լավագույն հնարավորությունն է՝ զարգացնելու ուսանողների մտածողությունն ու խոսքը:

Այս տեխնիկան օգնում է ձևավորել մտքերը բանավոր արտահայտելու կարողություն: Ուսանողների խոսքի զարգացման համար պետք է անընդհատ հարստացնել նրանց բառապաշարը, սովորեցնել ուսանողներին անընդհատ կատարելագործել իրենց խոսքը, օգտագործել տարբեր տեսակի ուղիներ՝ մտքերն ընդհանուր նախադասություններով արահայտելու: Երկխոսության համար հարցերի համակարգ ընտրելիս ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի բարձր մակարդակի

հարցին, խուսափի փակ հարցերից, որոնք պահանջում են մեկ բառով պատասխան: Նախապատվությունը պետք է տրվի խնդրահարույց հարցերին, որոնք խթանում են աշակերտների ճանաչողական գործունեությունը, օգնում զարգացնել քննադատական մտածողությունը: Որպեսզի երկխոսությունը հետաքրքիր լինի ուսանողների համար, խթանի դպրոցականների մտավոր գործունեությունը, աշակերտին պետք է սովորեցնել հարցեր տալ: Սրանք կարող են հարցեր լինել դասարանի, ուսուցչի համար:

Քննադատական մտածողության զարգացման համար կարևոր են առաջադրանքները, որոնք ուղղորդում են աշակերտներին թեմայի բացահայտմանը, հնարավորություն են տալիս ընտրելու և կիրառելու խնդիրների լուծման տարբեր եղանակներ, թույլ են տալիս աշակերտներին ընտրել այն մեթոդը, որը նա համարում է օպտիմալ: Դպրոցականները սովորում են աշխատել ոչ թե պատրաստի նմուշներով, այլ փորձում են ինքնուրույն ընտրել կոնկրետ խնդրի լուծման ճանապարհը:

Այս տիպի աշխատանքի հետաքրքրական մեթոդ է որևէ առարկա ցույց տալը և աշակերտներին հանձնարարել կապը որևէ երևույթի հետ: Օրինակի համար կարելի է ցուցադրել կացին կամ այլ աշխատանքային գործիք ու հանձնարարել, թե ինչով է այն կապված մարդու առողջության հետ, ինչու և ինչպես կարող է այն կապ ունենակ օրինակ շնչառական օրգանների հիվանդությունների հետ:

3.Քննադատական մտածողության զարգացմանն ուղղված մեթոդներ

Եռանկյունացում. Գնահատիր երեք գործոն միաժամանակ. Միևնույն իրադարձությունը կամ երևույթը հաճախ կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ կամ կարող են կարևորվել դրանց վրա ազդեցություն ունեցած տարբեր գործոնները: Այս ռազմավարությունը հնարավորություն է տալիս նյութի երեք մեկնաբանություններ կամ երեք տարբեր գործոններ: Այս ռազմավարությունը հնարավորություն է տալիս նյութի երեք մեկնաբանություններ կամ երեք տարբեր գործոններ պատկերավոր համադրել ու վերլուծել:

Եռանկյունացում կիրառելու նպատակով անհրաժեշտ է.

- Գծել եռանկյուն և ամեն մեկնաբանություն կամ գործոն գրել եռանկյան գագաթներից մեկի մոտ:

- Աշակերտներին կարելի է նախապես տարբեր աղբյուրներ տրամադրել, որոնք կօգնեն տեսակետներ ձևակերպել:
- Սեփական կարծիքն արտահայտելու համար սովորողներին կարելի է առաջարկել գրել սեփական անվան սկզբնատառերը եռանկյան այն գագաթին, որտեղ ներկայացված մեկնաբանությունը կամ գործոնը ավելի են կարևորում, քան մյուսները:
- Նախնական կարծիքները գրելուց հետո պետք է երեխաներին խնդրել հիմնավորել ինչու:

Գտիր տարբերությունները: Որպես դասի լավ սկիզբ, բոլորի հետ իրականացվող աշխատանք՝ կարելի է սովորողներին ներկայացնել նկարների շարք և խնդրել նրանց գտնել հիմնավոր տարբերություններ, բացատրել նկարները բառերով:

Այստեղ կարևոր է սովորողներին հորդորել մի կողմ թողներ զուտ արտաքին պատկերում եղած տարբերություններն ու խնդրել նրանց սեփական գիտելիքների հիման վրա գտնել բարդ իմաստային տարբերություններ՝ հակադրություններ ու ընդհանրություններ:



Նկար 1.

Քննարկման ծավալման հաջորդ փուլում, երբ արդեն քննարկված ու վեր են հանված բոլոր խնդիրները, կարելի է բացել նկարների հաջորդ խումբը, որը աշակերտներին պետք է մղի պատասխանատվության, հոգատարության, կապի ու հետևանքի գիտակցման: Ուսուցչի դերն այստեղ կայանում է ուղղորդել աշակերտին իր վարքագծում ձևավորել և զարգացնել նորմեր, որոնք կարող են նպաստել նախապես քննարկված խնդիրների լուծմանը: Օրինակ՝ նկ. 2

Նկ.2

Քննադատական մտածողությունը կարող է ձևավորվել միայն համառ ու երկարատև աշխատանքի արդյունքում:

Կարծում ենք քննադատական մտածողության զարգացման համար հետաքրքրական ու ժամանակակից մեթոդներ են <<Շրջված դասարանի>> և <<Միջառարկայական կապերով դասավանդման>> մեթոդները: Երկու մեթոդի հիմնական նմանությունն ու առավելությունը կայանում է նրանում, որ երկուսի դեպքում էլ իմացականի զարգացման բարձրագույն՝ վերլուծության փուլը իրականացվում է դասարանում՝ ուսուցչի ուղղորդմամբ ու անմիջական օգնությամբ: Բացի այդ երկու դեպքում էլ գործողությունների կենտրոնում աշակերտն է՝ իր կատարած աշխատանքով, ինքնուրույն ձեռք բերած փաստական գիտելիքներով, որի քննարկումն ու վերլուծությունը դասարանում հնարավորություն են տալիս միմյանցից սովորել, ազատ հաղորդակցվել, սովորել լսել դիմացինին, ընկալել նրա մտքերն ու գործողությունները, ինչպես նաև ձևավորում է բանավիճելու ու քննարկելու մշակույթ դասարանում և աշակերտների հարաբերություններում:

Դասի պլան
Ուսուցիչ՝ Նասխուլյան Սվետլանա Դպրոց՝ Դասարան՝ V Աշակերտների քանակ՝ 26 Ամսաթիվ՝ 14.10.22
Դասի թեման և հարցերը Դասի թեման՝ <<Կենդանիների բազմազանությունը և դերը կենսոլորտում>>: Հիմնական քննարկումը տարվելու է հետևյալ նախնական վարկածի ուսումնասիրության շուրջ. <<կենդանի օրգանիզմները սերտորեն կապված են միմյանց հետ և առանձին տեսակների անհետացումը կարող է բնության մեջ առաջացնել անցանկալի փոփոխություններ>>: • նախնական վարկածի հավաստիությունը, • կենսամիջավայրը, որտեղ ապրում են կենդանիները, • ջրային կենդանիներ, • կենդանիների դերը բնության մեջ, • գիշատիչ և մակաբույծ կենդանիներ, նրանց դերը բնության մեջ: Դասի հիմնական հարցերը. 1. Ինչ է կենսամիջավայրը, 2. Որո՞նք են տարբեր կենսամիջավայրերում ապրող կենդանիներին տարբերակող հիմնական առանձնահատկությունները, 3. Ինչո՞ւ են կարևոր մակաբույծներն ու գիշատիչները բնության մեջ, 4. Ինչպե՞ս է կենսաբազմազանությունը պահպանվում, 5. Ինչպես է ապահովվում հավասարակշռություն կենդանական աշխարհում:
Դասի վերջնարդյունքները. • Կարողանալ սահմանել կենսամիջավայր, ֆաունա, մակաբույծ կենդանիներ, նախակենդանիներ, ողնաշարավոր և անողնաշար կենդանիներ հասկացությունները, • Կարողանալ ներկայացնել կենդանական աշխարհի յուրաքանչյուր օղակի դերը մյուսի պահպանման գործում, • Գիտակցել կենսաբազմազանության պահպանման կարևորությունը:

Կապը ակտիվ մտածողության սկզբունքի հետ Դասի ընթացքում կիրառվելու է պատկերի ակնթարթային դիտման մեթոդը, որի նպատակը երեխաների շրջանում վերլուծություն անելու կարողությունը զարգացնելն է: Նկարը որպես ուսումնասիրության աղբյուր դիտարկելը և նկարն ուսումնասիրելը:	
Ռեսուրսներ • Տարբեր կենսամիջավայրերի կենդանական աշխարհն արտահայտող նկարներ, • Պարաբոլներ, որոնք ներկայացնում են կենդանիների պահանջներն ու կենսագործունեության պայմանները	
Դասի ընթացքը	**Աշակերտների գործողությունները**
Դասի սկիզբը՝ 5 ր	Դասը նպատակահարմար է անցկացնել <<Շրջված դասարան>> մեթոդով՝ երեխաներին հանձնարարելով տանը ուսումնասիրել արդեն վերևում նշված նախնական վարկածն ու ուշադրություն դարձնել հետազոտական կետերին
15 րոպե 1 Փուլ.	3 հոգանոց խմբերով դիտել ռեսուրսներում նշված նկարները և փորձել հասկանալ յուրաքանչյուր կենսամիջավայրում կենդանի օրգանիզմների վարքը, նրանց ազդեցությունն այդ միջավայրի վրա:
15-17ր 2-րդ փուլ	Աշակերտներին հանձնարարել տանը ձեռք բերված գիտելիքների հիման վրա աղյուսակի կամ այլ պատկերավորման միջոցով ներկայացնել յուրաքանչյուր կենսամիջավայրում բազմազանության դերը: Ապա խմբերի աշխատանքը տեղափոխել գրատախտակի վրա ու դրանց հաղորդակից դարձնել բոլորին:
7- 10 ր 3-րդ փուլ	Արդեն խմբերից յուրաքանչյուրի հետազոտությունից ձեռք բերված փաստական եզրակացությունը կարճ ձևակերպմամբ ամրագրել գրատախտակին:

5ր	Ամփոփում, հետադարձ կապ. Որն էր դասից ստացած ամենարժեքավոր ինֆորմացիան:

Այսպիսով ակնհայտ է , որ քննադատական մտածողության զարգացման կարևորագույն կետը պատասխանատվության գիտակցումն ու որոշումների կայացումն է: Որն է իմ դերը խնդրի լուծման ասպարեզում, ինչ կարող եմ ես անել, որպեսզի փոխեմ իրադարձությունների ընթացքը. Սրանք են այն կարևորագայուն հարցերը, որոնց՝ աշակերտի կողմից ինքնահարցադրմանը պետք է կարողանա հասնել ուսուցիչը քննադատական ու վերլուծական մտածողությունը զարգացնելու համար:

Այսպիսի հարցերի պացահայտումը հնարավորություն կտա աշակերտին բացահայտել երևույթների՝

- Կապը, ձևը,
- Փոփոխությունը ժամանակի ու տարածության մեջ,
- Պատճառ-հետևանքային կապերը և այլն:

Հնարավորություն կտա ինքնուրույն հասնել գիտելիքի ձեռքբերմանը, ոչ թե փորձել վերարտադրել արդեն իսկ գոյություն ունեցող, բայց իրականությունից հեռու թվացող ճշմարտությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քննադատական մտածողությունը գրեթե բոլոր ոլորտներում վերաբերում է օբյեկտիվորեն վերլուծելու և հիմնավորված դատողություն կատարելու ունակությունը:
2. Ժամանակակից աշխարհում քննադատական մտածողությունը ամենապահանջված արժեքն է, որ որպես գիտելիք եզակի է և կարող է պատկանել միայն այն կրող անհատին:
3. Քննադատական մտածողությունը ներառում է աղբյուրների գնահատումը, ինչպիսիք են տվյալները, փաստերը, դիտելի երևույթը և հետազոտության արդյունքները: Լավ մտածողները կարող են հիմնավոր եզրակացություններ անել և գնալ պատճառաբանված որոշումների, գտնել կապեր ու անել կանխատեսումներ:
4. Դասապրոցեսի ընթացքում քննադատական մտածողության զարգացմանն ուղղված մեթոդները հիմնականում ներառում են ժամանակակից աշակերտակենտրոն կրթական տեխնիկաները, որոնց ընթացքում աշակերտը ինքն է հասնում գիտելիքի նախ բացահայտմանը, ապա յուրացմանը, այսինքն ոչ թե հանդես են գալիս որպես գիտելիքը յուրացնող սուբյեկտ, այլ այն ձևավորող օբյեկտ:
5. Այս տիպի աշխատանքների ընթացքում կարևոր է և ուսուցչից պահանջում է ջանքերի լարում հատկապես աշխատանքի պլանավորման փուլում, ինչը իրենից ենթադրում է հարցերի ճիշտ ձևավկերպում, աշխատանքի պլանավորում ու խնդիրների բացահայտմանն ուղղված միջոցների տրամադրում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Болотов В. Критическое мышление – ключ к преобразованию российской школы / В. Болотов, Дж. Спиро // Директор школы. – 1995. № 1.
2. Кларин М.В., Инновационные модели обучения в зарубежных педагогических поисках / М. В. Кларин. – М. : Арена 1994.
3. Терлецкая Л. Критическое мышление как средство развития умений учащихся анализировать и применять информацию // Материалы международной научно-практической конференции «Развитие навыков критического мышления», М.: МГИМО-Университет, 2015.
4. Теплов Б. М. Избранные труды в 2-х т. / Б. М. Теплов. – Педагогика, 1985, Т. 2.
5. Халперн Д. Психология критического мышления / Халперн Д. – СПб : Питер, 2000
6. Хачумян Т. И. Понятие "критическое мышление" и его сущность в психолого-педагогической науке / Хачумян Т. И. // Теоретические вопросы культуры, образования и воспитания: сб. наук. пр. Вып. 24, часть 2. – Киев : Издательский центр КНЛУ, 2003.